

ՌՈՒԲԵՆ ՄԻՄՈՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՀԱԽՈՒՄԵՑԻ. ՆԾԱՎԱՎՈՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ ԵՎ ՔԱԶԱՐԻ ԶԻՆՎՈՐԸ

Այսօր, երբ հայությունը, շարունակելով իր նոր գոլամարտը, պատրաստվում է նշելու քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը, անհրաժեշտություն է զգացվում հանրությանը ներկայացնելու սուրբ հավատի և հայրենիքի անկախության համար իր կյանքը՝ նվիրաբերած մեծերից մնկի քիչ հայտնի անունն ու գործը, որն իր զարմանալի անհատականությամբ հաշորդեց 18-րդ և նախորդեց 19-րդ դարերի մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ներուսներին: Այդ հայորդին արքևայիսկոպոս և գորազնի հրամանատար Գրիգոր Մանուչարյան Հախումեցին է:

Նրա կենապղությունն առաջին անգամ 1894 թվականին իր «Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում» աշխատության մեջ ներկայացրել է Ալեքսանդր Երիցյանը, սակայն նրան ամհայտ են եղել երշանկահիշատակ Սրբազն Հոր ճանշյան և մարմար թվականները (նա ապրել է 73 տարի, մահացել 1846 թվականին): Անցած դարում Հախում (Ասխիկին Շամշադինի շրջանի) զյուղը մեծ համբավի է արժանանում շնորհիվ այդտեղ ծնված ու բակված Գրիգոր Եպիսկոպոս Մանուչարյանի, որի անունը Հախումը նաև կոչվել է «Վարդապետի զյուղ»: Այս բարձրաստիճան հոգևորականը ուսւաց տարեզրության մեջ հայտնի է դառնում 1803 թվականին, իշխան Ցիցիանովի՝ Գանձակի վրա Տեղանակած արշավանքի ժամանակ, երբ Շամշադինի և Ղազախի 500 հայ երիտասարդներից մի հնենկազուն էր կազմել, և ինքը դարձել գնդապետ՝ որպես ժողովրդի նրազած ողորումների զինվոր: «Վեղարը և հոգևորականի տարազը ծալելով տանը... հայտնում է Ա. Երիցյանը, - նա հազել էր շինականի չուխալ, ծածկել ոչխարէ մեծ փափախ, կապել թուրը և դաշոյնը և հրացանը ձեռքին, սպիտակ նժոյզի վրայ նստած, առաջնորդում էր իր գումարին թէ՝ Գանձակի, և թէ՝ Երևանի վրայ արշաւած ժամանակ: Պարսից հնենկազորի հետ կոի սկսողը և ճակատահար լինողը միշտ այդ հոգևորականն էր լինում իր կտրիճներով: Սարսափելի էր դառնում այս հեզ և համաստ հոգևորականը պատերազմի դաշտում, թուրը հանած միջոցին»:

Հայտնի է, որ ներկայի Տավուշի մարզում ուսւաց տիրապետությունը հաստատվել է 1801 թվականին: Դրան ամբողջ 18-րդ դարում նախորդել էին Դաղլուստանի լեռնականների և օսմանյան թուրքերի անվերջանալի ասպատակությունները, իսկ 1795-ի ամուանն ու աշնանը՝ պարսից Աղա Մահմետ-խանի մարդակով արշավանքը, երբ աշխարհի երեսից վերացան Հայաստանի հյուսիս-արևելյան գավառների նախորդ տասնամյակներում փրկված բնակիչները: Ժամանակակից-

Աերի վկայությամբ, քերին հաջողվեց փրկվել՝ ապաստանելով հայրենիքի անտառ-Աերում ու լեռների ծերպերին, նաև փախչելով Հյուսիսային Կովկաս: Հայերի այդ նոր դժվարությունները չհապաղեց իր օգուտը քաղել Գանձակի Զավադ խանը, որը հարևան Ծամշադիմի գավառի զյուղերի բնակիչներին քեց իր երկրամաս, որը երկրագործների և հարկատուների պակաս էր զգացվում: Հավանաբար, տարագիր-Աերի մեջ եղել է նաև երիտասարդ քահանա (կամ սարկավագ) Գրիգոր Մանուչարյանը, որն իր հոտի հետ հայրենիք է վերադարձել ուսաց տիրապետության հաստատումից հետո: Այսպես ասելու հիմք է տալիս 1802 թ. մայիսի 8-ին ուսական կայսրության անցկացրած աշխարհագիրը, որի ցուցակում Ծամշադիմի գավառի շատ զյուղեր, նաև Հայուսմը, բացակայում են: Իսկ մինչ այդ ահարկու պատերագմներին հաջորդած ժամանակի հետևանքով 1798 թվականին սկսվել էր արցախահայության տարերային գաղթը դեպի Արևելյան Վրաստանի հայկական գավառները: 1799-ին ուսաց Պավել Առաջին ցարը հատուկ հրովարտակով կարծեն իրավաբանորեն վավերացրեց այդ գործնթացը, Ուսաստան Վերաբնակվել ցամկացող Ղարաբաղի մելիքներին և ճրանց հապատակներին Խազախ կամ Ղազախ (ամբողջ Աղստևի հովիտը մինչև Գուգարաց լեռների կատարներ ընկած անտառու տարածքն այդպես էր կոչվում 16-րդ դարի կեսերից Պարսկաստանի խորքից այստեղ Վերաբնակեցված թաթարական ցեղի անունով) երկրամասում բնակվելու իրավունք շնորհեց: Սկսվեց ներկային Տավուշի մարզի հայաթափված զյուղերի շենացումը դարաբաղցներով: Եվ սա Մայր Հայաստանին Արցախի պատմական կարևոր ծառայություններից մենք պիտի համարել, որովհետև գրա կենամարդութով նորից հայացան թաթար-մոնղոլների ժամանակներից հայաթափված հյուսիս-արևելյան գավառները: Ահա այս անապահով ու խանակ ժամանակներում, երբ ուզմական թատերաբեմ էր դարձել Արևելյան Վրաստան՝ Գանձակի խանության հետ ունեցած սահմանը, երեսամյա Գրիգոր Մանուչարյանը Ղազախում և Ծամշադիմում նոր-նոր բնավորված հայկական զյուղերի երիտասարդ հայրենակիցների կյանքը թուրք դաշաղ ներից, աղապարներից և պարսիկ կղզրաշներից պաշտպանելու ռազմական կազմակերպում է 500 վրիժառուների մի հեծելագունդ, որն այն ժամանակ մեծ ուժ էր հանդիսանում մարտադաշտում:

Գրիգոր Հայուսմեցին հավանաբար կրթություն է ստացել Հայքատի վաճռում, որի առաջնորդին էին ենթարկվում Ղազախի և Ծամշադիմի վիճակները: Անհայտ է, թե ենք է ձեռնադրվել քահանա և եպիսկոպոս: Ազգային-ազատագրական պայքարում եղել է Հայաստանաց Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու գաղափարակիցն ու կամաց ծովուներն իրականացնողներից մենքը: «Հայրենաց փրկիչ» պատվանունը ստացած Աշտարակեցին իր քաջ և նվիրյալ հոգևոր եղբոր ծառայությունից օգտվեց նաև Եփեմ Կաթողիկոսին փրկելու, թշնամական օղակի միջով Թիֆլիսի հասցելու անհնարին թվացող խնդիրն իրականացնելիս: Նշանակալի և բազում են Սրբազն Հոր քաջագործությունները մարտադաշտերում, երբ իր արդար սրով պատժում էր հայրենաց բռնացող ներին:

Ուսա-պարսկական առճակատման սկզբում Գրիգոր Հայուսմեցին իշխան Ցիցիանից արժանանում է Սուրբ Գևորգի գիմնվորական խաչի և տարենա 300 ուրույն

թոշակի: Մասմակցում է նաև կրոն Գուղովիչի Երևանան արշավանքին, առանում ծանր վերքեր, հազիվ փրկվում մամից: Այս ամսամ հատուկ հրովարտակով Գրիգոր Խափակուպուր պարզեատրվում է Վլադիմիրի և Աննայի շրանշաներով, իսկ տարնկան թոշակի չափը հասցվում է 600 ոուրու: Արինի իր բաշերով պատվով է կատարում Կովկասի կատավարիչներ և ուազմանակատի հրամանատարներ Երմոլովի և Պավելիչի մարտական առաջարարները՝ զարդում Ծամշադիմում ապստամբած թուրքերին, Երևանի թերդի գրավումից հետո թշնամու առաջ ամուր փակում Կոր գետի հովտից դեպի Արարատյան դաշտ ձգվու ճանապարհները, ոուսաց զորքին օգնում ուտելիքով և մետախուզական հավաստի տեղեկություններով, հաստատ համոզված, որ նպաստում է տառապայի բայրենիրի ազատազրության սուրբ գործին:

Եվ երբ 1826-ին Երմոլովը բանակով իջնում է Հասան-սու (Հախում) գետակի մոտ, կովի ժամանակ ականատես լինելով Սրբազն Հոր քաշազրոծություններին, զրկում է իր ժողովրդից օտարի լուծ թոքափել տենչացող հովուրակամին և խնդրում հայտնել, թե ինչպես վարձատիր մեծ տերության անունից: «Պատասխանեց, հայտնում է Ա. Երիցյանը, - որ ինքն ամձամբ ոչինչի կարոտ չէ, բայց անօրենություն է համարում, որ թուրքի աղալար և գեց կոչված ազնվականները վաղուց ի վեր տիրացել են հայոց զույերին ու սոցա կալվածներին և, ծանր հարկ առնելով, կտղերում են հայոց ազգաբնակությունը, այն էլ ներկա քրիստոնա իշխանության տիրապետության ժամանակ»: Սրբափիսկոպոս Մանուչարյան այդ մասին գրավոր տեղեկագիր է ներկայացնում Երմոլովին, որի պատասխանում կարդում ենք. «Սրբազն Հայր Գրիգոր արքեպիսկոպոս Հայոց, ողորմած Տեր... Զորաց բանակի հետ զալով Հասան-սու, ես ինքս վկա եղա Զեր գովելի գործերին, վասն որու սուրբ պարտը եմ համարում ինձ՝ հայտնել Զերդ Սրբության ի դիմաց տերության կատարյալ զորունակություն: Հարզելով Զեր՝ ինձ մատուցած տեղեկացրի մեջ հայտնած մտքերը, ես հրամանագրեցի Ծամշադինի զիսավոր վերակացուին, որ նոյն զավառակի հայերին բոլորովին ազատելով թուրքերի իրավասությունից՝ արձանագրեն նոցա որպես արքունի (այսինքն՝ ազատվում են նորտական կախվածությունից - հետ.): Իսկ ինչ որ կվերաբերի բոլոր հայոց ընդհանուր կախումն ունենալուն մնացած թուրքաբնակ զավառակներում, ես այդ ևս ամենաշապես կկարգադրեն և պաշտոնապես կիրատարակեմ ի զիտություն ամենեցուն...»:

Ոուս-պարսկական պատերազմներից հետո, երբ Արենելյան Հայաստանում հաստատվել էր խաղաղություն, Գրիգոր արքեպիսկոպոսը քաշվում է իր Հախում զույլը, որպես Ծամշադին և Ղազախի ենթաթեմի առաջնորդ (այդ պաշտոնում նրան 1828-ի մայիս ամսին հաստատել էր Ներսես Աշտարակեցին), շարունակում իր սիրելի Նոր Վարազ վանքի շենացումը, նպաստում երկրամասի եկեղեցաշինությանը, կրթում, անեցնում հովուրականների նոր սերունդ, մասմակցում Հովհաննես Կարբենցի Կաթողիկոսի ընտրությանը: Արյինիվային փաստաթյեթերը վկայում են, որ անցած դարի 20-40-ական թվականներին Ղազախի և Ծամշադինի զավառերի քահանաների մեծ մասին ձեռնադրել է մեծ Հախումեցին: Նրա մեջ, սակայն, մշտարթուն էր հայրենիրի զինվորը: Երբ լսում էր, թե ավազակարար թուրքերը հայերից տավար են զոդացել կամ մարդ են սպանել, անհապաղ վեղարը փոխում էր փափախի, հեծնելով միշտ երթի պատրաստ կրակուտ ձիմ՝ թոշում չարագործ-

Անրի Բետևից: Թուղթերի համար սարսափելի էր արքայիսկոպոս, և Արանք Հայո Գրիգորին «դեկի քեշիշ» (զիժ տերտեր) էին կոչում, իսկ երախտապարտ հայերը, որոնց անձնուրաց պաշտպանում էր՝ մեծարում էին «տեր» և «աղա» բառերով:

Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարյանի սրբալուս գերեզմանը գտնվում է իր սիրելի Նոր Վարազա վաճքի հայացքի ներքո, ձորի աջ լանջին, հին Հախում գյուղի տարածքում, 12-րդ դարի խոնարհված եկեղեցու գավթում: Հավերժական հանգստի վկան ՌԴԼ (1648) թվականին կերտված ոչ մեծ խաչքարն է, որի հակառակ երեսին ჩետազայում փորագրվել է մեծ հայի հարթաքանդակը: Նա քանդակված է իրենից անբաժան ձիով, հրացանով ու բազմաճյուղ խաչով: Այժմ էլ հին Հախում (Մերօրյա Վարազավան) գյուղում բնակվում են անվանի հոգևորականի և հայրենից քաջ պաշտպանի եղբայրների շառավիղները: Արհին մեր օրերում կենում է մոռացումից: Տասնամյակներից հետո նորից բանուկ է դարձել դեպի նրա գերեզման ձգվող արահետը, իսկ անցած ամուսնը մեծ Հախումեցու շրիմին խոր զգացմունքով հոգևորականի պաշտոն կատարեց Գուգարաց թեմի Տավուշի մարզի տեսուչ Հայ Դերենիկ Վարդապետ Դավթյանը: Առաջարկ է եղել հայ Աշանավոր հոգեվորականի և քաջահմուտ զինվորականի անունով կոչել Վարազավան գյուղի դպրոցը:

